Հաստատում եմ

ՀՀ Լոռու մարզի Վանաձորի ծովակալ

Իսակովի անվան թիվ 23հիմնական դպրոցի

Տնօրեն՝ _____ Տ. Հովսեփյան

«16» _____10_____ 2023 թ

Դասարանի դասղեկի՝ դպրոցի կանոնադրությամբ և պարտականությունների կիրառմամբ ամենամսեան գործառույթներից և դպրոցի ուսումնադաստիարակչական գործունեությունից բխող դասարանի ղեկավարի տարեկան պլանից:
ՀՀՇՀԴ՝ տնօրեն՝ Հ. Գալստյան

ԴԱՍԱՐԱՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ՊԼԱՆ

Լոռի — Վանաձոր

մարզ — համայնք

ծովակալ Իսակովի անվան թիվ 23 դպրոց

ուսումնական հաստատության անվանումը

III գ

դասարանը

Թամարա Վոլոդյայի Հովսեփյան

դասարանի ղեկավարի անունը, հայրանունը, ազգանունը

2023-2024 ուսումնական տարի

Դասղեկի աշխատանքի փուլային նկարագրություն

Ուսումնական տարվա սկիզբ

1. Կազմել աշակերտների անվանացանկը

2. Կազմել դասարանի սոցիալական անձնագիրը

3. Սպառիչ տեղեկություններ հավաքել աշակերտների ՝ լրացուցիչ կրթական հաստատություններում մասնակցության մասին

4. Կազմել դասարանի դաստիարակչական աշխատանքի պլան

Ամենօրյա աշխատանքներ

1. Էլեկտրոնային մատյանում նշել բացակաները

2. Հետևել կարգապահությանը

3. Հետևել հերթապահությանը դասարանում Շաբաթվա աշխատանքներ

1. Անցկացնել դասղեկական ժամեր

2. Կատարել այլ պլանավորված աշխատանքներ

Ամենամսյա աշխատանքներ

1. Նախապատրաստել և կազմակերպել սովորողների մասնակցությունը դպրոցական գործընթացներին

2. Դուրս բերել սովորողների բացակայությունները

3. Օգտվել հոգեբանական ախտորոշիչ թեստերից , հարցաշարից , ախտորոշման այլ միջոցներից , դրանք նրբանկատորեն կրևառել դաստիարակական աշխատանքում

4. Իրականացնել դիտարկումներ ուղված սովորողների մեջ ԿԱՊԿ ունեցողների բացահայտմանն և մասնակցություն գնահատմանը և ԱՈՒՊ –ների մշակմանը

5. Դժվար դաստիարակվող աշակերտների բացահայտում,համապատասխան կանխարգելիչ և շտկողական աշխատանքներ ընտանիք-դպրոց –հոգեբան կապի

միջոցով:

Դասարանի ղեկավարը (այսուհետ ՝ դասղեկ) , իսկ տարրական դպրոցում՝ դասվարը՝

1) դաստիարակչական աշխատանք է կատարում իր դասարանի սովորողների շրջանում, հայտնաբերում է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված սովորողի (ընտանիքի) և դրա մասին մեկօրյա ժամկոտում

տեղեկացնում է դպրոցի տնօրենին՝ սերտորեն համագործակցելով մյուս մանկավարժական աշխատողների հետ.

2) մասնակցում է իր ղեկավարած դասարանում սովորողների կրթության առանձնահատում պայմանների կյանքի դիտարկմանը, բացահայտմանը, գնահատմանը և մանկավարժահոգեբանական աջակցության համապատասխան ծառայությունների մշակմանը, դրանց ապահովմանը.

3) նպաստում է սովորողների նկատմամբ դպրոցի և ընտանիքի միասնական մանկավարժական պահանջների կատարման ապահովմանը.

4) անհրաժեշտության դեպքում սովորողների համար կազմակերպում է ուսումնական օգնություն.

5) իրականացնում է դասարանի համար սահմանված գործավարությունը, էլեկտրոնային գրանցումները, դպրոցի տնօրինությանը ներկայացնում է սովորողների առաջադիմության, հաճախումների և վարքի մասին տեղեկատվություն.

6) կազմակերպում է սովորողների առողջության ամրապնդմանն ու ֆիզիկական զարգացմանը նպաստող միջոցառումներ, մրցույթներ, նպատակային, էքսկուրսիաներ, շրջագայություններ և այլ միջոցառումներ.

7) դպրոցի մանկավարժական խորհրդի քննարկմանն է ներկայացնում սովորողի խրախուսանքի կամ կարգապահական տույժի ներկայացնելու հարցը:

ԿՐԹԱԿԱՆ - ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (*դասարանի ընդհանուր բնութագիրը)* –2023-2024ուս. տարում Վանաձորի ծովակալ Իսակովի անվան թիվ 23հիմն. դպրոցի 3-րդ Գ դասարանում սովորում է 24աշակերտ՝ 13տղա, 11 աղջիկ: Աշակերտներն աչքի են ընկնում աշխույժ, ակտիվ բնավորությամբ: Դասարանում տիրում է առողջ, ընկերական փոխօգնության մթնոլորտ: Կան որոշ թերություններ, որոնց շուրջ աշխատանք է կատարվում՝ներառելով ծնողներին: Աշխատանք է տարվում լսելու, խոսելու կուլտուրան բարձրացնելու ուղղությամբ,դիմացինին գնահատելու և հանդուրժողականություն դրսևորելու ուղղությամբ:

2. Ռազմա – հայրենասիրական դաստիարակություն – Զրույց <<Իմ հայրենիքի ապագան >> թեմայով: Ծանոթացնել ՀՀ խորհրդանշաններին՝ դրոշին, զինանշանին, սովորեցնել օրհներգը: Ծանոթացնել հայ ազատամարտիկներին, նրանց կատարած սխրանքներին: Պատմել նաև մերօրյա հերոսների մասին:

3. Ֆիզիկական դաստիարակություն – Զրույց մարմնակրթության, սպորտի նշանակության և կարևորության մասին: Մասնակից կլինեն դպրոցի սպորտային միջոցառումներին, մրցույթներին: Ֆիզկուլտուրայի դասաժամերին երեխաներին մասնակից դարձնել շարժախաղերին: Զրույց անցկացնել«Առողջ մարմնում՝ առողջ հոգի» թեմայով:

4. Աշխատանքային դաստիարակություն – Զրույց«Աշխատանքը մայրն է բարիքի, ծուլությունը՝ չարիքի»թեմայով: Ներկայացնել աշխատանքի դերն ու անհրաժեշտությունը մարդու կյանքում: Փոխադարձ օգնության կազմակերպում և կիրառում: Մասնակցել բակի և դպրոցամերձ տարածքի մաքրման աշխատանքներին:

5. Հոգևոր դաստիարակություն – Ծանոթացնել տարվա մեջ նշվող եկեղեցական տոներին, դրանց էությանն ու նշանակությանը: Լրացուցիչ տեղեկություններ հաղորդել եկեղեցիների, վանքերի մասին, կազմակերպել էքսկուրսիաներ դեպի մոտակա տեսարժան վայրեր: Սովորեցնել ճիշտ պահվածքը և վարվելաձևը եկեղեցում:

6. Գեղագիտական դաստիարակություն – Ամենօրյա աշխատանք տանել կիրթ վարվելաձևի և քաղաքավարության կանոնների շուրջ: Կազմակերպել էքսկուրսիաներ, այցելել թատրոններ, ցուցահանդեսներ, որպեսզի կարողանան տեսնել և գնահատել

Գեղեցիկը:

Սովորել, որ ցանկացած պարագայում և միջավայրում պետք է տեսնել և գնահատել գեղեցիկը և շրջապատում լինել դրական էներգիայով:

Մշակել գեղեցիկը տեսնելու և ընկալելու ունակություն: Գեղագիտական դաստիարակության շրջանակում օգտագործելԿԳՄՍ նախարարության կողմից սովորողներին տրվող աբոնեմենտային տոմսերը՝ այց կազմակերպել թատրոն, թանգարան, պատկերասրահ:

7. Բնապահպանական դաստիարակություն – Մշտապես ուշադրություն դարձնել շրջապատի, բնության պահպանմանը: Կազմակերպել զբոսանքներ, բնության դիտարկումներ այգիներում, կարողանալ տեսնել բնության մեջ կատարվող փոփոխությունները: Հասկացնել բնության պահպանման կարևորությունը: Զրուցել բնության նշանակության, կարևորության և այն մաքուր պահելու անհրաժեշտության մասին:
8. Դպրոց – ընտանիք կապը – Մշտապես կապ պահպանել ծնողների հետ: Անցկացնել զրույցներ ծնողների հետ՝ երեխաների դաստիարակության հետ առնչվող հարցերի շուրջ: Այցելել բոլոր աշակերտների տները, պարզել սոցիալապես անապահով երեխաներին, նրանց հետաքրքրությունները:Հատուկ ուշադրություն դարձնել առավել ուշադրության կարիք ունեցող ծնողներին:

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ԱՄԻՍՆԵՐԻ

Ժամկետ	Աշխատանքի բովանդակությունը	Կատարող	Նշումներ
04-08 09	Դասարանական ակտիվի ընտրություն,ինքնակառավարման անկյան ստեղծում	դասվար	
11-15 09	Զրույց կոլեկտիվիզմի,դասարանական համերաշխության և դրան հասնելու ուղիների մասին։Կազմել առաջարկությունների պատ։	դասվար	
18-22 09	Զրույց<<Անկախության տոն>> թեմայով,նկարչություն համապատասխան թեմայով;		
25-29 09	Զրույց<<Իմ հայրենիքի ապագան >>թեմայով	դասվար	
02-06 10	Հրավիրել դպրոցի բուժքրոջը, ստուգել աշակերտների	դասվար, բուժքույր	
	սանիտարահիգիենիկվիճակը, զրուցելառողջապրելակերպի,		
	մարմնամարզությանմասին, այնմասին, թե ինչպես պետք է		
	խուսափել հիվանդություններից, ինչպես ճիշտ սնվել։		
09-13 10	Զրույց Թարգմանչաց տոնի նրնապահպանի օրվա մասին։	դասվար	է
16-20 10	Զրույց<<Ինչպես պայքարել վատ սովորույթների դեմ>> թեմայով։	դասվար	
	Թեման ամփոփել նկարչական մրցույթ-ցուցահանդեսով։		
30-03 11	Կազմել ալբոմ բնության անձեռակերտ և ձեռակերտ հուշարձանների թեմայով։	դասվար	

06-10 11	Զբոսանք դեպի մոտակա այգի, կատարել աշնանային	դասվար	
	դիտարկումներ։Կազմակերպել աշնանային ցուցահանդես։		
13-17 11	Տեղեկանալ, թե ինչ խմբակների են հաճախում (գեղարվեստական,	դասվար	
	երաժշտական, սպորտային)։ Զրուցել դրանց կարևորության		

	մասին:		
20-24 11	Զրույց<<Ինչպես պաշտպանվել բնական աղետներից՝սողանքներ>> թեմայով:	դասվար	
27.11-01.12	Զրույց «Ինչպե՞ս պաշտպանվել բնական աղետներից՝երկրաշարժ,հրդեհ>> թեմաներով:	դասվար	
04-08 12	Զրույց<<Ճանապարհային երթևեկության կարգավորման ազդանշանները>> թեմայով:	դասվար	
11-15 12	Զրույց<<Փողոցները և ճանապարհներն անցնելու կանոնները>> թեմայով:		
18-22 12	Ամանորի տոնին ընդառաջ՝այն դարձնել հետաքրքրի ու լիարժեք:		
	Ինքնաշեն խաղալիքների պատրաստում՝տոնածառը զարդարելու համար:		
08-12 01 24թ	<<Փոքրիկ իշխանը>> գրքի ընթերցում և քննարկում:	դասվար	
15-19 01	Բնության ձմեռային դիտարկումներ,ձմեռային խաղերի կազմակերպում;	դասվար, զինղեկ	
22-26 01	Զրույց «Իմ սիրած մանկական հաղորդումները» թեմայով:	դասվար	
		դասվար	
29.01-02.02	Ծանոթացնել դպրոցի տարհանման պլանին		
05-09 02	Ցերեկույթ՝<<Ժամանակը ոսկի է>>		
12-16 02	Աստունքի մրցույթ՝ Հովհ. Թումանյանի ստեղծագործությունների շուրջ, նվիրենք գրքեր ու կարդանք շատ:	դասվար	
19-23 02	Զրույց <<Տիրապետենք մայրենի լեզվին>> թեմայով:		
26.02-01.03	Զրույց հայոց բանակի թեմայով:	դասվար	
04-08 03	Զրույց<<Մի տոնի պատմություն՝ մարտի 8>> թեմայով:		
11-15 03	Զրույց «Իմ սիրած մուլտֆիլմը» թեմայով, դիտել որևէ մուլտֆիլմ,	դասվար	
	քննարկել		
18-22 03	Զրուցել խոսքային դրսևորումների մասին,կատակը թեթևացնում է կյանքը:	դասվար	

01-05 04	Բնության գարնանային դիտարկումներ։	դասվար	
08-12 04	Հեքիաթի ընթերցում , քննարկում,բեմականացում	դասվար	
15-29 04	Զրույց «Որն է լավ սովորելու գաղտնիքը,կազմել առաջարկությունների պատ	դասվար	
22-26 04	Անցկացնել հեռավար էքսկուրսիա `Ծիծեռնակաբերդ հուշահամալիր,բացատրել դրա ստեղծման պատմությունը։	դասվար	
29.04-03.05	Զրույց <<Ամեն մի բարիք ստեղծվում է աշխատանքով, խնայել ամենուր>> թեմայով։	դասվար	
06-10 05	Զրույց<<Ինչ է նշանակում հաղթանակ, ինչ է նշանակում պարտություն>>։		
	Բերել օրինակներ կյանքից և առօրյայից։	դասվար	
13-17 05	Զբոսանք դեպի որևէ հուշակոթող։	դասվար	
20-24 05	Էքսկուրսիա	դասվար	

ԴԱՍԱՐԱՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԹԵՄԱՏԻԿԱՆ

Անցկացման օրը,ամիսը, տարեթիվը	Անցկացվող միջոցառման(դասախոսություն, զրույցներ,քննարկումներ և այլն) թեման		Պատասխանատու
1	Կազմակերպչական հարցեր	Պատրաստվել ուստարվան:	դասվար
2	Զրույց կոլեկտիվիզմի և համերաշխության մասին:	Ինչպես ապրել առանց խնդիրների:	դասվար
3	Զրույց ՀՀ անկախության տոնի թեմայով:	Տոնի էության բացահայտում:	դասվար
4	Զրույց <<Իմ հայրենիքի ապագան>> թեմայով:	Աշակերտների պարտականությունները այդ գործում:	դասվար
5	Զրույց <<Պահպանել սանիտարահիգենիկ կանոնները>> թեմայով:	Բացահայտել հիգիենայի անհրաժեշտությունը:	դասվար
6	Զրույց Թարգմանչաց տոնի և բնապահպանի օրվա մասին:	Գաղափար կազմոլ տոների մասին:	դասվար
7	Զրույց «Ինչպես պայքարել վատ սովորույթների դեմ>> թեմայով:	Կամքի դրսևորմանձևավորում:	դասվար
8	Զրույց<<Բնության ձեռակերտ և անձեռեկերտ հուշարձաններ>>	Կարողանալ ճանաչել տարբերակել և պաշտպանել:	դասվար
9	Բնության աշնանային դիտարկումներ:	Աշխարհաճանաչողական գիտելիքների հարստացում:	դասվար
10	Զրույց «Արտադպրոցական խմբակների կարևորության մասին>>:	Ինչպես օրը ճիշտ կազմակերպել,առօրյան հագեցնել:	դասվար
11	Զրույց«Ինչպե՞ս պաշտպանվել բնական աղետներից՝սողանքներ » թեմայով:		դասվար
12	Զրույց <<Ինչպես պաշտպանվել բնական		դասվար

	աղետներից՝երկրաշարժ,հրդեհ>> թեմայով:		
13	Զրույց<<Ճանապարհային երթևեկության կարգավորման ազդանշանները>>:	Սովորել երթևեկության կանոնավորման ազդանշանները:	
			դասվար
14	Զրույց «Ճանապարհներն ու փողոցներն անցնելու կանոնները>>:	Կարողանալ երթևեկել առանց կյանքը վտանգելու:	դասվար,
15	Պատրաստել տոնածառի խաղալիքներ:		դասվար
	Նոր տարվա տոնահանդես	Սովորել խնայել և գեղագիտական ճաշակ դրսևորել:	դասվար
16	<<Փոքրիկ իշխանը>> գրքի ընթերցում և քննարկում:	Սովորել բացահայտումներ անել:	դասվար
17	Բնության ձմեռային դիտարկումներ:		դասվար
18	Ծանոթացում դպրոցի տարհանման պլանին:Զրույց<<Սուր կենցաղային իրադրություններ և դրանց ազդեցությունը>>թեմայով:	Երեխաներին իրազեկել վերահաս վտանգներից խուսափելուհնար ավորությունների ն:	դասվար
			դասվար
19	Ծանոթացում դպրոցի տարհանման պլանին:Զրույց<<Սուր կենցաղային իրադրություններն դրանց ազդոցությունը>> թեմայով:	Երեխաներին իրազեկելվերահաս վտանգներից խուսափելու հնարավորություն ներին:	դասվար
20	Միջոցառում<<Ժամանակը ոսկի է>>:	Ինչպես խնայել ժամանակը:	դասվար
21	Նվիրենք գրքեր միմյանց:	Կարողանալ գնահատել գրքի արժեքը,նվիրելու ճիշտ ընտրություն կատարել:	դասվար
22	Զրույց<<Տիրապետենք մայրենի լեզվին>>թեմայով:	Կարողանալ ճիշտ գրել և խոսել մայրենի լեզվով:	դասվար
23	Զրույց հայոց բանակի թեմայով:		դասվար
24	Զրույց<<Մի տոնի պատմություն՝մարտի8>>:	Ծանոթացնել ստեղծման պատմությանը:	դասվար
25	Զրույց<<Իմ սիրած մուլտֆիլմը>>:	Կարողանալ	դասվար

		դիտածից կարևոր հետևություններ անել։	
26	Զրույց<<Աշակերտների տարրական գործողությունները կենցաղային վտանգավոր,սուր իրադրություններում>>։	Ինչպես պաշտպանվել վրա հասած վտանգավոր իրադրություններում։	դասվար
27	Զրույց<<Աշակերտների տարրական գործողությունները կենցաղային վտանգավոր,սուր իրադրություններում>>։	Ինչպես պաշտպանվել վրա հասած վտանգավոր իրադրություններում։	դասվար
28	Զրույց <<Արտակարգիրավիճակների մասին ազդարարումը և բնակչության գործողություններ հաջորդականությունը>> թեմայով։	Ծանոթացնել ազդանշաններին և գորշողությունների հաջորդականությանը։	դասվար
29	Ինքնօգնության և փոխօգնության տարրերը կենցաղային իրադրություններում ստացած վնասվածքների դեպքում։	Խուճապի չմատնվել,կարող անալ օգնություն ցուցաբերել։	դասվար
30	Հեռավար էքսկուրսիա՝ Ծիծեռնակաբերդ։	Տեսահոլովակներով գաղափար կազմել Ծիծեռնակաբերդի մասին։	դասվար
31	Զրույց<<Ամեն բարիք ստեղծվում է աշխատանքով>>	Աշխատասիրության և նյութական բարիքների նկատմամբվերաբերմունքիարժեորում։	դասվար
32	Բանավեճ՝ինչ էհաղթանակ, ինչ է պարտություն։	Կարծիքների բացահայտումն ձևավորում։	դասվար
33	Էքսկուրսիա դեպի որևէ հուշակոթող։	Գեղագիտական արժեքների բացահայտում։	դասվար
34	Էքսկուրսիա՝տպարան։		դասվար

Ծնողական ժողովների թեմատիկան

Ժամկետ	Աշխատանքի բովանդակությունը	Կատարող	Նշումներ
Սեպտեմբեր	1. Կազմակերպչական հարցեր: 2. Դասագրքերի բաշխում ։ 3. Ծնողխորհրդի կազմի ընտրությունը:	Դասվար	
Հոկտեմբեր	.Ծանոթացում նոր ուսուցչուհու հետ . Կազմակերպչական հարցեր	Դասվար	
Դեկտեմբեր Հունվար	1. Ուսումնական գործընթացի հետ կապված հարցերի քննարկում: 2. Հոգեբանական,կարգապահական խնդիրների քննարկում և լուծման տարբերակների քննարկում: 3. I կիսամյակի գնահատման ամփոփում , առաջադիմության հարցերի քննարկում ,բացակայությունների ամփոփում: 4.արձակուրդային աշխատանքների քննարկում	Դասվար	
Մարտ-Ապրիլ	1. կազմակերպչական հարցերի քննարկում: 2. առաջադիմության հարցերի քննարկում ,բացակայությունների ամփոփում:	Դասվար	
Մայիս	1. II կիսամյակի բացակայությունների ամփոփում: 2. գնահատման տարեկան ամփոփում: Առաջադիմության հարցերի քննարկում 3. Ընթացիկ հարցեր	Դասվար	